

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԱՔ-ԲՄԱՇՁԲ-22/6**

« 31 » հոկտեմբերի

ք. Արմավիր  
2022թ.

«Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դ. Խուրաթյանի, որը գործում է «Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Եղիազարյանի, որը գործում է «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքները» (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքները» (այսուհետ՝ աշխատանք) ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **195 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ «Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքները» (այսուհետ՝ աշխատանք) 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել, Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուին իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուին պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը Տրջոցով փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուն հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը՝ համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 274500000 (երկու հարյուր յոթանասունչորս միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 45750000 (քառասունհինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

### 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արմավիրի համայնքապետարան  
Ք. Արմավիր, Հանրապետության 32  
ՀՀ Ֆինանսների նախարարություն  
Հ/Հ՝ 900332001560  
ՀՎՀՀ՝ 04440427  
Համայնքի ղեկավար՝

Դ. Խուղաթյան

(ստորագրություն)  
Կ.Տ.



#### ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ  
Ք. Երևան, Քաջազնունի 1  
Բանկը՝ Հայբիզնես բանկ ՓԲԸ  
Հ/Հ՝ 1150014351360100  
ՀՎՀՀ՝ 04421922  
Տնօրեն՝ Հ. Եղիազարյան

Հ. Եղիազարյան

(ստորագրություն)  
Կ.Տ.



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՅԱՇԻՎ\***  
**ՀՀ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱԿԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾԵՆՔԻ  
 ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

NN	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քանակ	Միավորի արժեք/հազար դրամ/	Ընդամենը /հազար դրամ/
1	2	3	4	5	6
	<b>Բլոկների քանդման աշխատանքներ</b>				
1	Գոյություն ունեցող ասբոշիֆերային տանիքի քանդում	քմ	450.00	0.50	225.00
2	Տանիքի փայտանյութի քանդում հանձնում պատվիրատուին	մ <sup>3</sup>	13.50	15.00	202.50
3	Տաք անցումի փայտե ծածկի քանդում հանձնում պատվիրատուին	մ <sup>3</sup>	2.40	6.00	14.40
4	Ջերմոնեկուսիչ շերտի քանդում միջպանելային շլակ	մ <sup>3</sup>	21.00	6.00	126.00
5	Ջրհորդանի ապամոնտաժում	100մ	0.12	60.00	7.20
6	Ջրթափ խողովակների ապամոնտաժ	100մ	0.01	300.00	3.00
7	Ե/բ պանելային բետոնի քանդում/ուժեղացում, օդափոխություն/	մ <sup>3</sup>	5.50	18.00	99.00
8	Փայտե պատուհանների քանդում /պատուհանագոգերի հետ միասին/ մնացորդները	100 մ <sup>2</sup>	0.71	120.00	85.20
9	Դռների քանդում այդ թվում մնացորդների	100մ <sup>2</sup>	0.1838	100.00	18.38
10	Պատերի քանդում /միջնորմեր թեթեվ բլոկներից / ներառյալ հարդարումը	մ <sup>3</sup>	27.00	9.00	243.00
11	Արտաքին պատերի սվաղի քանդում, կարերի մաքրումով և լվացումով	100մ <sup>2</sup>	9.30	100.00	930.00
12	Մանրահատակի քանդում	մ <sup>2</sup>	85.80	0.50	42.90
13	Փայտե հատակների քանդում հանձնում Պատվիրատուին	100մ <sup>2</sup>	15.23	90.00	1370.70
14	Կերամիկական սալիկներով հատակների քանդում	մ <sup>2</sup>	316.00	1.00	316.00
15	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի քանդում	100մ <sup>2</sup>	2.89	90.00	260.10
16	Ծածկի սալերի փոշեզրկում կարերի մաքրում և լվացում	100մ <sup>2</sup>	3.54	18.00	63.72
17	Պատերից հախճասալերի քանդում	մ <sup>2</sup>	12.50	6.00	75.00
18	Բետոնի ենթաշերտի քաղկում /սավվածք, հատակ/	մ <sup>3</sup>	23.90	15.00	358.50
19	Մետաղական խողովակների ապամոնտաժում Ф24- 76	մ	52.00	1.50	78.00
20	Մետաղական ցանկապատի քանդում	մ	135.00	1.20	162.00
21	Ասֆալտբետոնե և բետոնային շերտի ծածկի քանդում հարվածահար մուրճով	մ <sup>3</sup>	4.20	15.00	63.00
22	Պատերի և առաստաղի սվաղի քանդում, կարերի մաքրումով և լվացումով	100մ <sup>2</sup>	13.19	90.00	1187.10
23	Քիվի գծային շարվածքի քանդում	մ	59.00	3.00	177.00
24	Բազալտե սրբատաշ շարվածքով հենախարսխային պատի քանդում	մ <sup>3</sup>	9.60	15.00	144.00
25	Հատակների բետոնե հիմնաշերտի քանդում	խմ	72.00	15.00	1080.00
26	Աստիճանավանդակի բազալտե հարթակների քանդում	քմ	6.35	3.00	19.05
27	Բազալտե աստիճանների ապամոնտաժում	գմ	48.00	2.50	120.00

28	Փայտե բռնածողերի քանդում	զմ	8.00	1.50	12.00
29	Մետաղական բազրիքների քանդում	քմ	8.00	1.50	12.00
30	Շին.աղբի բարձում ինքնաթափին	տն	190.00	1.50	285.00
31	Տեղափոխում 10կմ	տն	190.00	1.50	285.00
32	Ե/բ ծածկի սալի ապամոնտաժում Աշխ,1,2*0,8=0,96 , մեք/մեխ 1,87*0,8=1,496	հատ	14.00	17.80	249.20
33	Կից սենքերի վերգետնյա մասի քանդում/առանց ծածկի սալերի k=0,8/	100մ3	5.56	542.00	3013.52
34	Անցքերի բացում ծածկերում 60*100մմ	100հատ	3.10	50.00	155.00
	<b>Ընդամենը</b>				<b>11482.47</b>
	<b>Տեսակարար կշիռ</b>				<b>5.02%</b>
	<b>1. Հողային աշխատանքներ ժապավենային հիմքեր</b>				
1	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	45.00	5.00	225.00
2	հիմքերի ներքանի տակից գրունտի մշակում էքսկավատորով կողիցքով 3-րդ կարգի բնահողում	1000մ <sup>3</sup>	0.042	3000.00	126.00
3	բնահողի հետլիցք ձեռքով 2-րդ կարգ	մ <sup>3</sup>	41.00	3.00	123.00
4	Ետլիցքի բնահողի տոփանում	100մ <sup>3</sup>	12.00	30.00	360.00
5	բետոնի կազմաքանդում	մ <sup>3</sup>	3.30	12.00	39.60
6	Շին.աղբի բարձում ինքնաթափին	տն	42.00	2.00	84.00
7	Տեղափոխում 10կմ	տն	42.00	2.00	84.00
	<b>Հիմքեր</b>				
1	Ե/բ կետային հիմքի իրականացում հակահորդեային աստիճանների տակ	մ3	2.50	100.00	250.00
2	Ամրան 10մմ A500C	տ	0.12	750.00	90.00
3	Ամրան A240 դասի Փ8	տն	0.032	750.00	24.00
	<b>ժապավենային հիմքեր ուժեղացում</b>				
1	Բազալտե խճից մախաշերտ , h=100մմ	մ <sup>3</sup>	10.00	12.00	120.00
2	Անցքերի շաղափում պատերում d-12մմ, l-1200մմ,	100անցք	0.25	200.00	50.00
3	ներքանի տակ շերտի պատրաստում բետոնից մակկիշը B7.5(100)	մ <sup>3</sup>	20.60	140.00	2884.00
4	Հիմքերի ուղղահայաց ջրամեկուսացում բիտումի մածիկով	100մ <sup>2</sup>	0.32	200.00	64.00
	<b>3. Պատեր</b>				
1	Պատի շարվածքի ամրանավորում	տն	0.08	750.00	60.00
2	Անցքերի շաղափում պատերում d-16մմ 40 սմ	100անցք	0.22	150.00	33.00
3	Պատերի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ <sup>3</sup>	15.50	10.00	155.00
4	Ամրան A240 դասի Փ8	տն	0.014	850.00	11.90
	<b>Պատերի ուժեղացում</b>				
1	Անցքերի շաղափում պատերում d-12մմ, 40 սմ	100անցք	32.17	12.00	386.04
2	խարիսխի և կոշտ ամրանների տեղադրում անցքերում Փ12 մմ A500C	տն	1.57	750.00	1177.50
3	Ե/բ շրջանակների պատրաստում բացվածքների ուժեղացման համար մակկիշը B20(250)	մ3	24.68	140.00	3455.20
4	Ամրան A500C	տ	1.60	750.00	1200.00
5	Ամրան Ա240	տն	0.443	750.00	332.25
6	Բք 150*150*4 ցանց	տն	0.067	1700.00	113.90
7	Պատերի ուժեղացում Ե/բ շապիկով - պատերի մաքրում, կարերի բացում, ամրանային ցանցի պատրաստում և տեղադրում, տորկրետ բետոնացում	մ2	627.00	10.00	6270.00
8	խարիսխների լացիակում պոլիմերցեմենտով, ներկարկումով	մ3	1.50	100.00	150.00
9	Բք 150*150*4 ցանց	տն	0.772	1700.00	1312.40
10	Ամրան Ա500Ց	տն	4.05	100.00	405.00

<u>Ծածկի ամրագում</u>					
<u>Ե/բ միաձուլյ ծածկի սալ</u>					
1	Ծածկերի ուժեղացում միաձուլյ ե/բ սալով B20 մակրահատիկ	մ <sup>3</sup>	33.70	140.00	4718.00
2	Բք 150*150*4 ցանց	տն	1.04	200.00	208.00
3	Ամրան Ա 240 6մմ	տն	0.16	750.00	120.00
4	Ամրան A500C դասի Փ 12	տն	0.963	750.00	722.25
5	Խարիսխի և կոշտ ամրանների տեղադրում անցքերում Փ12 մմ A500C	տն	0.305	750.00	228.75
6	Ե/բ միաձուլյ գոտու կառուցում B 20 բետոնից	մ <sup>3</sup>	14.10	150.00	2115.00
7	Ամրան A240 դասի	տն	0.335	750.00	251.25
8	Ամրան A500C	տն	1.034	750.00	775.50
9	Խարսխահեղուկ A500C	տն	0.083	750.00	62.25
1	Բազալտե խճից նախաշերտ , h=100մմ	մ <sup>3</sup>	0.12	70.00	8.40
2	Բետոնե նախաշերտ 50մմ հաստությամբ B7-5	մ <sup>3</sup>	0.175	100.00	17.50
3	Ե/բ միաձուլյ հիմնային հեծանի կառուցում B-20 բետոնից	մ <sup>3</sup>	1.05	130.00	136.50
4	Անցքերի շաղափում պատերում d-16մմ, l-700մմ,	100անցք	0.10	70.00	7.00
5	Խարիսխի տեղադրում անցքերում Փ16	տն	0.002	1100.00	2.20
6	Ե/բ միաձուլյ սյունների կառուցում B-20 բետոնից U-1	մ <sup>3</sup>	2.50	150.00	375.00
7	Ե/բ միաձուլյ պարզունակների կառուցում B-20	մ <sup>3</sup>	1.05	150.00	157.50
8	Ամրան A240 ի Փ8	տն	0.031	750.00	23.25
9	Ամրան A500C	տն	0.218	750.00	163.50
10	Ե/բ միաձուլյ գոտու կառուցում B -15 բետոնից MB-1 MB-2	մ <sup>3</sup>	4.99	130.00	648.70
11	Ե/բ միաձուլյ ծածկի սալի կառուցում 4-րդ հարկ	մ <sup>3</sup>	6.43	15.00	96.45
12	Ամրան A240 գոտի	տն	0.10	750.00	75.00
13	Ամրան A500C գոտի	տն	0.30	750.00	225.00
14	Ամրան A500C	տն	0.54	750.00	405.00
15	Ե/բ միաձուլյ գոտու կառուցում B -15 բետոնից կայանքի հիմք	մ <sup>3</sup>	2.10	130.00	273.00
16	Ամրան A240 գոտի	տն	0.05	750.00	37.50
17	Ամրան A500C գոտի	տն	0.10	750.00	75.00
18	Մետաղակն ներդիներ	տն	0.13	750.00	97.50
19	Ե/բ միաձուլյ սյունների կառուցում B-20 բետոնից U-1	մ <sup>3</sup>	6.65	130.00	864.50
20	Ե/բ միաձուլյ պարզունակների կառուցում B-20	մ <sup>3</sup>	14.20	130.00	1846.00
21	Ե/բ միաձուլյ հիմնային ենթաշերտի կառուցում B-20 բետոնից	մ <sup>3</sup>	3.30	130.00	429.00
22	Ե/բ միաձուլյ միջպանելային գոտու կառուցում B20 բետոնից	մ <sup>3</sup>	1.60	130.00	208.00
23	Ամրան A240	տն	0.802	750.00	601.50
24	Ամրան A500C	տն	1.54	750.00	1155.00
25	Խարիսխի տեղադրում անցքերում Փ16	տն	0.022	750.00	16.50
26	Մետաղակն ներդիներ	տն	0.39	950.00	370.50
27	Բք ցանց	տն	0.102	1700.00	173.40
28	Ե/բ հավաքովի ծածկի պանելների տեղադրում 1ՊԿ 57.12-8AтVЛ-C կարճ	հատ	8.00	130.00	1040.00
29	Հրաթեցնող շերտի իրականացում M100 30մմ	100մ2	5.05	250.00	1262.50
30	Բետոնի նախաշերտի ամրանավորում 150x150x3 մմ Բք ցանցով	տն	0.39	1700.00	663.00
31	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժ/երկտավի բաց պատշգամբ/	տն	0.52	1200.00	624.00
32	Մետաղական կոնստրուկցիաներ ներկում հակակոռոզիոն ներկով	100մ2	0.58	200.00	116.00
33	Ե/բ միաձուլյ սյունների կառուցում B-15 բետոնից DC-1, Dc-2 Dc-3	մ <sup>3</sup>	11.60	130.00	1508.00
34	Ե/բ միաձուլյ պարզունակների կառուցում B-15 DC-1, Dc-2 Dc-3	մ <sup>3</sup>	4.83	130.00	627.90
35	Ամրան A240 ի Փ6	տն	0.182	750.00	136.50

36	Ամրան A500C	տն	0.75	750.00	562.50
37	Խարիսխի տեղադրում անցքերում $\Phi 16$	տն	0.022	750.00	16.50
38	Մետաղակն ներդիներ	տն	0.04	850.00	34.00
<b>ՇՎԱՔԱՐԱՍ</b>					
39	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ <sup>3</sup>	0.60	6.00	3.60
40	Բնահողի հետլիցք ձեռքով 2-րդ կարգ	մ <sup>3</sup>	0.20	9.00	1.80
41	Ետլիցքի բնահողի տոփանում	100մ <sup>3</sup>	0.10	15.00	1.50
42	Ե/բ կետային հիմքի իրականացում հակահրդեհային աստիճանների տակ	մ <sup>3</sup>	1.14	100.00	114.00
43	Ամրան 10մմ A500C	տ	0.010	750.00	7.50
44	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժ/երկտավի բաց պատշգամբ/	տն	0.39	1200.00	468.00
45	Մետաղական կապերի մոնտաժ ուղանկյուն խողովակներից 4 - 1 ներառյալ մոնտաժային տարրերը և հեղուակները	տն	0.35	1200.00	420.00
46	Թիթիեղ մետաղական ներկաված ԲԱՆԳԱ	մ <sup>2</sup>	4.60	12.00	55.20
47	Ներկաված ՑԻՆԿԱՊՍ ԹԻԹԵՂ d=0,5մմ	մ <sup>2</sup>	0.50	12.00	6.00
48	Մետաղական կոնստրուկցիաների երկտակ ներկում հակակոռոզցիոն ներկով	100մ <sup>2</sup>	0.07	200.00	14.00
49	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում	100մ <sup>2</sup>	0.07	200.00	14.00
50	Սյուների բետոնացում B12,5 դասի բետոնով ամրալարի վրա	մ <sup>3</sup>	1.65	130.00	214.50
51	Տուֆե երեսպատում / տուֆ ` 20 մմ , եպօքսիդային սոսնձով ` 15 մմ, սալերի խարսխումով	մ <sup>2</sup>	24.50	30.00	735.00
52	Կախովի առաստաղի իրականացում -20-25սմ լայն, հյարթ մակերևույթով մետաղական պրոֆիլների վրա սալտակ /սանհանգույց/	մ <sup>2</sup>	5.50	12.00	66.00
<b>Տանիք</b>					
1	Ծպեղնաուղի տեղադրում (մարթակ, կանգնակ, մաուերլատ, թեքան, կապ, տոլ, գամ) հականեխիչ մշակված,	մ <sup>3</sup>	29.64	350.00	10374.00
2	Բեղյուս	տն	0.30	1700.00	510.00
3	Ամրան/ ճարմանդ/ $\Phi 10$	տն	0.20	950.00	190.00
4	Տանիքի ծածկի կառուցում ձևավոր ցինկապատ գունավոր քիթեղից փայտե կավարամածով Բանգա տեսակի 0,5մմ RAL 3005	100մ <sup>2</sup>	6.78	1200.00	8136.00
5	Չորսու /կավարամած/50*50մմ	մ <sup>3</sup>	3.95	550.00	2172.50
6	Ինքնաշաղաթող հեղյուս 6 հատ/1մ <sup>2</sup>	հատ	700.00	0.50	350.00
7	Ջրհորդանի կառուցում տախտակամածով ցինկապատ քիթեղից	100մ	0.95	1200.00	1140.00
8	Փայտե կարկասի հակահրդեհային լաքապատում	մ <sup>3</sup>	35.59	12.00	427.08
9	Կավարամածի հակահրդեհային լաքապատում	100մ <sup>2</sup>	6.78	30.00	203.40
10	Պիպի կառուցում g/քիթեղից ներկված/ 0,5 մմ /	100մ <sup>2</sup>	0.80	950.00	760.00
11	Չագար g/քիթեղ 0,5 մմ, D = 120մմ ուղղանկյուն Ral 3005	հատ	18.00	9.00	162.00
12	Ջրթափ խողովակ g/քիթեղ 0,5 մմ, 120x120մմ ,	մ	110.00	6.00	660.00
13	Ծունկեր g/քիթեղ 0,5 մմ, D =120x120մմ	հատ	24.00	6.00	144.00
14	Շերտափեղկերով ձեղնալուսամուտների պատրաստում հականեխիչ նյութով մշակումով, ապակիով	հատ	4.00	200.00	800.00
15	Ձեղնալուսամուտների փեղկերի յուղաներկում	մ <sup>2</sup>	2.12	4.00	8.48
16	Ձեղնալուսամուտների կողերի թիթեղապատում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ հաստ.	քմ	21.60	11.00	237.60
17	Ձեղնալուսամուտներին հարող տարածքի փայտյա տախտակամածի պատրաստում հականեխիչ նյութով մշակումով	խմ	0.720	550.00	396.00
18	Ձեղնալուսամուտներին հարող տարածքի թիթեղապատում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ հաստ.	քմ	14.40	12.00	172.80
19	Փոքր ծածկեր g/քիթեղից 0,5մմ հաստ,	100մ <sup>2</sup>	0.50	850.00	425.00
20	Քիվի կառուցում /g/քիթեղից 0,55մմ հաստ./Տանիքի դուրս եկած մաս/	100մ <sup>2</sup>	1.10	950.00	1045.00
21	Չյունապաշտպանիչ արգելք L=2,0մ գույգ ձողերով RAL 3005	հատ	45.00	12.00	540.00

22	Գոլորշամեկուսացում իզոգամով	մ <sup>2</sup>	395.00	4.00	1580.00
23	Ջերմամեկուսիչ շերտի կառուցում պեռլիտի բաժիկետից 20սմ հաստ,	մ <sup>3</sup>	79.00	25.00	1975.00
24	Ջերմամեկուսիչ շերտի ծածկում գոլորշիաթող ջրամեկուսիչ թաղանթով	մ <sup>2</sup>	395.00	0.50	197.50
25	Ջրաթեցնող շերտի իրականացում M100 30մմ	100մ <sup>2</sup>	3.95	250.00	987.50
26	Բետոնի նախաշերտի ամրանափորում 150x150x3 մմ Bp ցանցով	տև	0.24	1700.00	408.00
<b>4. Հատակներ</b>					
1	Հատակի գրունտի տոփանում խճով 5-10մմ ֆրակցիա	100մ <sup>2</sup>	1.10	100.00	110.00
2	Հատակների նախապատրաստական շերտի իրականացում B12.5	մ <sup>3</sup>	2.20	150.00	330.00
3	Հիդրոմեկուլիչ շերտ իզոգամով	մ <sup>2</sup>	407.00	4.00	1628.00
4	Ջրաթեցնող շերտի իրականացում M100 30մմ	100մ <sup>2</sup>	2.07	200.00	414.00
5	Ջրաթեցնող շերտի իրականացում M100 20մմ	100մ <sup>2</sup>	2.07	170.00	351.90
6	Ջրաթեցնող շերտի իրականացում M100 40մմ	100մ <sup>2</sup>	2.07	250.00	517.50
7	Փայտե շրիշակների պատրաստում 10սմ բարձր.	զմ	99.60	3.00	298.80
8	Հատակների պատրաստում խեցեսալերից	100մ <sup>2</sup>	0.365	950.00	346.75
9	Հատակների պատրաստում չսահող տարագույն մամլոգրանիտից ոչ պակաս 8 մմ	100մ <sup>2</sup>	3.11	950.00	2954.50
10	Շրիշակների պատրաստում մամլոգրանիտից հաստ, h=150մմ գիպսաստվարաթղթե սալերի վրա հսպանիա	100մ <sup>2</sup>	0.16	1500.00	240.00
11	Աստիճաններ պատրաստում չսահող տարագույն մամլոգրանիտից ոչ պակաս 8 մմ	100մ <sup>2</sup>	1.58	1500.00	2370.00
12	Լամինատե հատակների պատրաստում ոչ պակաս 8մմ հաստ, 32 դասի / ներառյալ շրիշակները և սպունգը /	100մ <sup>2</sup>	3.71	1500.00	5565.00
13	խողովակների երեսապատում գիպսաստվարաթղթով 12.5մմ հաստ . իրակայուն և ջրակայուն, տեղադրումով մետաղական հիմնակմախկի վրա	մ <sup>2</sup>	8.80	20.00	176.00
14	Գիպսակարտոնի պրոֆիլ, արժեքը CD(մ)	զմ	45.00	2.00	90.00
15	Գիպսակարտոնի պրոֆիլ , արժեքը UD(մ)	զմ	38.00	2.00	76.00
16	Բույթային խցաբութակ , արժեքը	հատ	12.00	15.00	180.00
17	Թղթյա ժապավեն , արժեքը	մ	22.00	1.50	33.00
18	Ինքնապտուտակ, արժեքը	հատ	155.00	0.50	77.50
19	խողովակների երեսապատում մղֆ սալերով փայտե հիմնակմախկի վրա	մ <sup>2</sup>	20.40	30.00	612.00
20	Փայտե չորսու 30x30մմ	մ <sup>3</sup>	0.28	300.00	84.00
21	Դյուբել	հատ	850.00	0.10	85.00
<b>Միջնորմեր</b>					
1	Միջնորմերի կառուցում մետաղական մինչև h-3մ կարկասով,երեսապատելով երկու կողմից գիպսակարտոնե սալերով և ձայնամեկուսիչ 50 մմ հանքային բամբակյա շերտով	քմ	468.00	12.00	5616.00
2	Կախովի առաստաղ իրակայուն գիպսաստվարաթղթից 12.5.0մմ , տեղադրումով	մ <sup>2</sup>	964.00	6.00	5784.00
3	Գիպսակարտոնի պրոֆիլ, արժեքը CD(մ)	զմ	2352.00	1.00	2352.00
4	Գիպսակարտոնի պրոֆիլ , արժեքը UD(մ)	զմ	350.00	1.00	350.00
5	Բույթային խցաբութակ , արժեքը	հատ	24.00	14.00	336.00
6	Թղթյա ժապավեն , արժեքը	մ	520.00	1.50	780.00
7	Ինքնապտուտակ, արժեքը	հատ	900.00	0.50	450.00
8	Չգաճուկան հանգույցով , արժեքը	հատ	2064.00	0.50	1032.00
9	Կցորդ , արժեքը	հատ	2350.00	0.10	235.00
10	Կախովի առաստաղի իրականացում -AMSTRONG տեսակի մետաղական պրոֆիլների վրա սպիտակ /սանհանգույց և բաց պատշգամբի դասարաններ/ Եվրոպա	մ <sup>2</sup>	36.40	9.00	327.60
11	Պատերի սվաղում գաջի շաղախով	100մ <sup>2</sup>	4.36	350.00	1526.00
12	Պատերի ներկում մածկապատումով լատեքսով բարելաված որակի /ներառյալ անկյունակները / /անփայլ	100մ <sup>2</sup>	4.02	300.00	1206.00
13	Առաստաղների ներկում լատեքսով բարելաված որակի / /անփայլ ներառյալ մածկապատումը	100մ <sup>2</sup>	9.64	300.00	2892.00
14	Պատերի սվաղում ց/ավազե շաղախով հաղճասալի տակ	100մ <sup>2</sup>	1.15	200.00	230.00

15	Նոր բացվածքների ց/ա սվաղ մետաղական լարային ցանցով	100մ <sup>2</sup>	0.03	300.00	9.00
16	Դռների և պատուհանների շեպերի լավորակ սվաղում գաջով	քմ	44.70	9.00	402.30
17	Դռների և պատուհանների շեպերի ներկում լատեքսով	քմ	42.70	4.00	170.80
18	Դռների և պատուհանների շեպերի ց/ա լավորակ սվաղ	100քմ	0.125	550.00	68.75
19	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով ոչ պակաս - 4 մմ սոսինձ ԻՍՊԱՆԱԿԱՆ	100մ <sup>2</sup>	2.61	200.00	522.00
20	Միջնորմների կառուցում ՄԴՖ-ից ջրակայուն	մ <sup>2</sup>	6.30	30.00	189.00
21	Ալյումինե անկյունակներ 32x32մմ	մ	36.00	4.00	144.00
22	Տափօղակ	հատ	28.00	0.50	14.00
23	Միացնող դետալներ	հատ	12.00	1.50	18.00
